Էկ, հետևիր ինձ.
միջոցառումներ

Ընտանեկան երեկոյի համար, սուրբ գրությունների ուսումնասիրության համար, կամ պարզապես զվարճանալու համար:



Փետրվարի 26-մարտի 3

Թղթե տաճարներ

2 ՆԵՓԻ 11-19 ԳԼՈՒԽՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եսայիան ուսուցանել է, որ տաճարները հատուկ վայրեր են, որտեղ մենք սովորում ենք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին (տես 2 Նեփի 12.3): Պատրաստեք ձեր սեփական տաճարը: Թուղթը ծալեք երեք հավասար մասերի: Մի ծայրը կտրեք եռանկյունաձև: Բացեք թուղթը և մեջտեղում նկարեք ինքներդ ձեզ:

Կրտսեր խմբի երեխաների համար. Միասին դիտեք տաճարի մի նկար: Խոսեք այն մասին, թե ինչպես կարող եք սեր զգալ Աստծո տանը ճիշտ այնպես, ինչպես ձեր տանը:

Մարտի 4-10

Երգող վկայություններ

2 ՆԵՓԻ 20-25 ԳԼՈՒԽՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եսայիան կիսվում է Հիսուս Քրիստոսի մասին իր վկայությամբ: Նա ասել է, որ Հիսուսն իր ուժն ու երգն է (տես 2 Նեփի 22.2): Հիսուսի մասին ո՞ր երգերն եք դուք սիրում: Խոսեք այն մասին, թե ինչու եք սիրում դրանք: Այնուհետև միասին երգեք դրանք:

Կրտսեր խմբի երեխաների համար. Միասին երգեք «Պատմիր ինձ Հիսուսի մասին» (*Children's Songbook*, 57) երգը: Թող ձեր երեխան բարձրացնի Հիսուսի նկարը ամեն անգամ, երբ Նրա անունը հիշատակվում է երգում:



Մարտի 11-17

Տող առ տող պատմության ժամ

2 ՆԵՓԻ 26-30 ԳԼՈՒԽՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երկնային Հայրը օգնում է մեզ սովորել «տող առ տող» կամ քիչ-քիչ (2 Նեփի 28.30): Միասին տող առ տող պատմեք սուրբգրային մի սիրելի պատմություն: Բոլորը հերթով ասում են պատմության մեկ նախադասությունը, մինչև պատմությունն ավարտվի:

Կրտսեր խմբի երեխաների համար. Երկնային Հայրն օգնում է մեզ սովորել Հիսուս Քրիստոսի մասին: Բացեք 48-րդ էջը և հերթով ներկեք նկարի որևէ մասը:

Մարտի 18–24

Հիսուսին հետևելու քայլեր

2 ՆԵՓԻ 31-33 ԳԼՈՒԽՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նեփին ուսուցանել է, որ մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին, երբ հավատում ենք Նրան, ապաշխարում ենք, մկրտվում, ստանում Սուրբ Հոգու պարգևը և համբերում մինչև վերջ (տես 2 Նեփի 31): Յուրաքանչյուր քայլը գրեք տարբեր թերթիկների վրա, ապա տարածեք դրանք հատակին: Մեկ մարդ փակում է աչքերը և հաշվում մինչև 10, իսկ մնացածը կանգնած են են թերթիկի վրա: Այնուհետև հաշվողը ասում է Հիսուսին հետևելու քայլերից մեկը: Հաջորդը հաշվում է այդ թերթիկի վրա կանգնած անձնավորությունը:

Կրտսեր խմբի երեխաների համար. Երբ մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին, մենք հետևում ենք Նրա խոսքերին: Շարք կանգնեք և սկսեք քայլել: Առջևում կանգնածը առաջնորդն է: Յուրաքանչյուրը կրկնում է առաջնորդի քայլերը: Հերթով եղեք առաջնորդը:

Մարտի 25-31

Սուրբ Զատիկի շուշաններ

ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿԻ ՀԱՄԱՐ

Հիսուս Քրիստոսի շնորհիվ մենք կրկին կապրենք մահից հետո (տես Ալմա 40.22-25): Պատրաստեք 17-րդ էջի Սուրբ Զատիկի շուշանները: Տեղադրեք ձեր շուշանները ձեր ընտանիքի համար տեսանելի տեղում, որը կօգնի ձեզ հիշել Փրկչին այս շաբաթ:

Կրտսեր խմբի երեխաների համար. Սուրբ Զատիկի մասին կարդացեք 46-րդ էջում: Մինչ դուք կարդում եք, խնդրեք ձեր երեխաներին ցույց տալ Հիսուսի յուրաքանչյուր նկարը:

ՆԱՄՐԱԼԸՐ: ԿԵՏԻ ՕՐԱԳԻԼԻ